

## 1.2. Արտադրություն (ծառայություններ)<sup>2</sup>

### 1.2.1. Արդյունաբերություն<sup>2</sup>

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 19 աշխատանքները (121001-121019 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վերանայվել են 7 պետական վիճակագրական հաշվետվության ձևեր և դրանց լրացման հրահանգները (հաստատված են Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 29.12.2004թ. թիվ 21-Ն-27-Ն որոշումներով) :

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 10 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 8-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են 2004թ. մոնիտորինգում ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերածածկագրման աշխատանքները:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առաձգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) իրականացվել է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Հայաստանի Հանրապետության Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտին անդամակցության նախապայմանների ապահովման նկատառումներով պայմանավորված, ԱՄՀ ՏՏՀՍ –ի համար արդյունաբերության վիճակագրության մի շարք ցուցանիշների վերաբերյալ, ներկայացվել է տեղեկատվություն:

---

<sup>2</sup> Տես՝ Ծրագիր, Հավելված I: